ՀՀ Կառավարությանն առընթեր	26541786
Պետական եկամուտների կոմիտեի	ՀՎՀՀ
իրավաբանական վարչություն	ՀԾՀ՝ 3004570335

Ավետիք Հրաչիկի Խաչատրյան

անուն, ազգանուն, հայրանուն

ք. Երևան, Քոչարյան փ., 12 շ., 10 բ.

հաշվառման /բնակության/ հասցե

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1337-Ն որոշման հիման վրա ՀՀ կադաստրի կոմիտեից ստացված անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ տեղեկությունների համաձայն՝ Ձեր կողմից 2019թ. օտարվել է Գեղարքունիքի մարզ, համայնք Մարտունի, Երևանյան փ. 66 հասցեում գտնվող անշարժ գույքը:

Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ Օրենսգիրք) 147-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի «բ» ենթակետի /մինչև 29.06.2019թ. գործող խմբագրությամբ/՝ վերոնշյալ գույքի օտարումը համարվում է ձեռնարկատիրական գործունեության առարկա համարվող գույքի օտարում, իսկ գույքի օտարումից ստացվող եկամուտներն այլ հավասար պայմաններում համարվում են եկամտային հարկով հարկման օբյեկտ՝ համաձայն Օրենսգրքի 141-րդ հոդվածի:

Համաձայն հարկային պարտավորությունների հաշվարկման վերաբերյալ 30.03.2021 թիվ 718/2021/ԿՈՒՎ4/Ն տեղեկանքի՝ Ձեր կողմից չկատարած հարկային պարտավորությունը 30.03.2021թ. դրությամբ կազմել է 227.520 դրամ:

Տեղեկացնում ենք, որ համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի <<բ>> կետի՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում հարուցվել է վարչական վարույթ՝ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված վարչական ակտ ընդունելու նպատակով:

Նշված հարկային պարտավորությունները սահմանված ժամկետում չկատարելու դեպքի առթիվ, ի կատարումն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ և 38-րդ հոդվածներով վարչական մարմնին վերապահված պարտականությունների՝ առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11-ին ներկայանալ վարչական վարույթի նախնական լսումներին, կամ մինչև նույն ժամկետը ներկայացնել վերը նշվածի վերաբերյալ Ձեր գրավոր բացատրությունը և/կամ առարկությունը հետևյալ հասցեով՝ ք. Երևան Ս. Դավթի 87 ա: Չներկայանալու դեպքում գործը կարող է քննվել Ձեր բացակայությամբ:

ՀՀ ՊԵԿ ԻՎ ՀԳ և ՊԿԱ բաժնի առաջատար մասնագետ՝ Digitally signed by *Լ. Ջաղացպանյան*

հեռ.՝ 011-54-91-91/91-68/

7/Մյս/2021